

# ՊՁՏԻԿ-ՄՁՏԻԿ



«ԱՁԴԱԿ»Ի

ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՅԱԽԵԼՈՒԹ

Ա. ՏԱՐԻ ԹԻՒ 4 3ՈՒԼԻՍ 2002 bezdlg\_mezdlg@hotmail.com

## ՑԱՆՑԻՆ ՎՐԱՅ

<http://www.rocler.qu.ca/cbar-ret/index.html>

Այս հասցեին մեջ պիտի գտնեք կորսուելու վտանգին մեջ եղող կենդանիներու ցանկ մը: Փնտռուութեանը կարելի է ընել այբբենական կարգով, կամ աշխարհագրական դիրքով: Իւրաքանչիւր կենդանիին համար պիտի գտնեք մանրամասն տեղեկութիւններու շարք մը: Կայքին լեզուն է ֆրանսերէնը:

<http://www.worldwildlife.org/fun/kids.cfm>

WWF կամ «Ուրրլտուայլտլայֆ ֆաունտէյշըն» հաստատութիւնը կը վրադի կորսուելու վտանգի ենթարկուած կենդանիներով՝ փորձելով լուծումներ գտնել պանոնք պաշտպանելու համար: Անգլերէն լեզուով այս կայքին մէջ դուք պիտի գտնեք բազմաթիւ տեղեկութիւններ, ինչպէս նաեւ՝ խաղեր:

<http://animal.discovery.com>  
<http://kids.discovery.com>

Անգլերէն լեզուով այս կայքին մէջ եւս կրնաք գտնեք բազմաթիւ տեղեկութիւններ եւ խաղեր: Առաջին հասցէն յատկացուած է միայն կենդանիներու աշխարհին, մինչ երկրորդը շատ աւելի ընդարձակ է եւ կ'ընդգրկէ գիտական աշխարհը:

<http://www.aniwa.com>

Ընտանի եւ վայրի կենդանիներուն մասին տարբեր տեսակի տեղեկութիւններ եւ կարեւոր խրատներ: Կարելի է ընտրել անգլերէն կամ ֆրանսերէն լեզուները:

## ԱՍՈՒՆՆ ՈՒ ԱՆԱՍՈՒՆԸ...

Մեր մեծերէն լսած ենք, նաեւ այսօր փոքրերու համար պատրաստուած ժապաւէններէն ալ նոյնը կը պատմեն, որ երբ մէկը անվախ ու քաջ է, կ'ըսենք՝ առիւծի նման է: Երբ հաւատարիմ բարեկամ է՝ շունի, երբ հպարտ է՝ սիրամարգի, նապելի ու շփացած է՝ կատուի, անմեղունակ է՝ եղնիկի կը նմանցնենք: Եւ անշուշտ կարելի է այս շարքը երկարել եւ մարդու իւրաքանչիւր նկարագրի համեմատ անասուն մը գտնել:

Այս կը նշանակէ, թէ անասունները արտաքինով որքան ալ տարբեր են մարդոցմէ, նկարագրի կարգ մը գիծերով նման են մեզի: Մենք ու անոնք կը կոչուինք կենդանի, սակայն մենք ասուն կենդանի ենք, իսկ անոնք՝ անասուն: Այսինքն՝ մենք խօսող կենդանիներ ենք, իսկ իրենք՝ անխօս կենդանիներ (ասուն կը նշանակէ խօսող):

Մարդ արարածը, անասուններն ու բոյսերը երկիր մոլորակը կը գեղեցկացնեն: Այս երեքէն որեւէ մէկուն բացակայութիւնը ինքնաբերաբար երկիր մոլորակը կը



Սանան Գանտահարեան, (10 տարեկան) տգեղցնէ:

Սակայն կան փոքրեր եւ երբեմն նաեւ մեծեր, որոնք բարի սիրտ չունին, գեղեցկութենէ ալ շատ չեն հասկնար: Այս պատճառով ալ կը ցաւընեն ու կը չարչարեն անասունները: Ճամբան քալած ժամանակ կից մը կու տան կատուին եւ անոր ցաւի ծիչը լսելով կը հրճուին: Սրտի ամենայն հանգստութեամբ Ջատկուան օրերու ծուտիկներուն վիզերը կ'անջատեն: Անոնք չեն մոռնար նոյնիսկ աննշան մողեսի մը պոչը մարմնէն անջատել: Այս բոլորը կ'ընեն... ու կը հրճուին: Կը կարծեն, թէ իրենց կատարած գործը քաջագործութիւն է: Դժբախտաբար այս նոյն «քաջագործ»ները, երբ Ամպունի անտառներուն մէջ գտնուին եւ գայլ, բորեն

նի, յովազ կամ իրենցմէ աւելի պօրաւոր անասուն մը տեսնեն, կը վախնան, կը դողան ու կը հեռանան առանց մտածելու անոնց վնաս հասցնելու մասին:

Ճիշդ է այս մտածելակերպն ու կրթութիւնը: Երբ դիմացինդ տկար ու անխօս է, կը ցաւընես, իսկ եթէ պօրաւոր՝ կը վախնաս անկէ:

Անշուշտ այս դաստիարակութիւնը ծիշդ չէ: Մարդիկը, այսինքն՝ մենք բոլորս այս մոլորակին տէր ենք, ուրեմն նաեւ՝ անոր պահապանը: Ինչպէս որ մենք մեզի հոգ կը տանինք, այնպէս ալ մեր շուրջը գտնուող ասուն թէ անասուն բոլոր էակներուն հոգ պէտք է տանինք, որպէսզի բոլորս միասին ապրինք գեղեցիկ միջավայրի մը մէջ:

ملحق از كتاب



# ԻՆԱՊԻՏԱԿԱՆ ԱՐՇԱԻ

Ամառնային արձակուրդներուն ընթացքին օրերը կրնան երկար թուիլ: Ծով երթալ, ընկերներով հաւաքուիլ, համակարգիչով խաղալ, գիւղը պտոյտ մը ընել, շարժապատկեր դիտել... Ցանկը երկար է: Սակայն գիտէ՞ր, թէ Լիբանանի մէջ գոյութիւն ունին նաեւ մեծ թիւով թանգարաններ: Առիթ մը՝ գեղեցիկ բաներ տեսնելու, եւ նոյն ատեն նոր բաներ սորվելու:

Այս առաջին բաժինին մէջ դուն պիտի գտնես յատկապէս հնագիտական թանգարաններու ցանկ մը:



**● ԼԻԲԱՆԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԹԱՆԳԱՐԱՆԸ**

1942 թուականին հիմնուած պետական այս թանգարանը դժուար օրեր ապրեցաւ լիբանանեան քաղաքացիական պատերազմին ընթացքին: Սակայն պատերազմէն ետք ան նոր թափով դարձեալ բացաւ իր դռները, եւ վերանորոգման աշխատանքները կը շարունակուին տակաւին մինչեւ այսօր:

Մենք հոն պիտի գտնենք հնագիտական բազմաթիւ առարկաներ (անօթներ,

գոհարեղէններ, արձանիկներ, գործիքներ, զրահներ, դրամներ, արձաններ, խճանկարներ), որոնք պատմական տարբեր դարաշրջաններէ մեզի հասած են:

Իսկ թանգարանին ամէնէն կարելոր կտորը անշուշտ հիւրամ թագաւորին դագաղանը ման գերեզմանն է, որուն վրայ կը գտնուի մեզի ճանօթ փինիկեան ամէնէն հին գրութիւնը եւ կը ներկայացնէ փինիկեան այբուբենի 22 հնչիւններէն 20ը:

**Վայր** – Դամասկոսի պողոտայ, Պէյրութ:

**Ժամանակացոյց** – Ամէն օր, բացի երկուշաբթի օրերէն, ժամը 9:30էն 17:30:

**● ԿԻԼԻԿԻԱ ԹԱՆԳԱՐԱՆԸ**

Թանգարանը իր դռները բացած է 1998ին: Մենք հոն պիտի գտնենք յատկապէս եկեղեցական գանձեր, որոնք 1915ի հայկական Ցեղասպանութենէն փրկուած են եւ Սիւ քաղաքէն հալէպի ճամբով հասած՝ Անթիլիասի կաթողիկոսարան: Գանձերուն շարքին են մասունքներ, մասնատուփեր, խաչեր, սկիհներ, ոսկեթել ասեղնագործութիւններ, պատարագի զգեստներ, խաչքարեր, եւ երկու կարելոր ձեռագիրներ 13րդ եւ 14րդ դարերէն մնացած:

Միւս յարկերուն վրայ ցուցադրուած են ձեռագիրներու եւ մանրանկարներու մեծ հաւաքածոյ մը, հնատիպ գիրքեր, հնագիտական իրեր, գորգեր, գեղարուեստական նկարներ:

**Վայր** – Անթիլիասի կաթողիկոսարան, Անթիլիաս

**Ժամանակացոյց** – Երեքշաբթիէն Ճաբաթ ժամը 10:00էն 17:00, Կիրակի՝



10:00էն 13:00, ամրան ժամանակացոյց, Երեքշաբթիէն Ուրբաթ ժամը 7:30էն 13:00, Ճաբաթ ժամը 7:30էն 12:00, Կիրակի ժամը 10:00էն 13:00, թանգարանը փակ է երկուշաբթի օրերը:

**● ԼԻԲԱՆԱՆԻ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ**

Գիտէ՞ր, թէ Լիբանանի մէջ մօտաւորապէս մէկ միլիոն տարիներ առաջ ապրած են նախապատմական մարդիկ: Անոնց հետքերը գտնուած են աւելի քան 400 տարբեր շրջաններու մէջ:

Այս թանգարանին մէջ պիտի գտնէք այդ մարդոց գործածած տարբեր առարկաները, յատկապէս՝ քարէ շինուած գործիքներ, նախապատմական գլխաւոր երկու դարաշրջաններու ընթացքին (*փալէօլիթիք*, Ք. Ա. 2.5 միլիոն – 10,000 տարի, եւ *նէօլիթիք*, Ք. Ա. 10,000 – 6,000 տարի):

**Վայր** – Սէն Ժուլէֆ համալսարանի փողոց

**Ժամանակացոյց** – Երեքշաբթիէն Ճաբաթ, ժամը 9:00էն 15:00, բացի տօնական օրերէն եւ համալսարանի արձակուրդներէն:

**● ՊԷՅԹԵՏՏԻՆԻ ԹԱՆԳԱՐԱՆԸ**

Պէյթետտինի պարագային, անշուշտ առաջին հերթին պէտք է պտըտիլ Էմիր Պէշիր Շէհապ Բ.ի 19րդ դարու գեղեցիկ պալատին եւ անոր պարտէզներուն մէջ, ուսումնասիրել տախտակէ պատշգամները, գունաւոր ապակիէ պատուհանները, խճանկարները...

Այս նախկին նախագահական պալատը ազգային յուշարձանի վերածուած է 1934 թուականին:

Իսկ պալատին առաջին յարկին վրայ դուր պիտի գտնէք ազգագրական թանգարան մը, ուր կարելի է տեսնել աւանդական զրահներ, հագուստներու եւ գոհարեղէններու հաւաքածոներ:

**Վայր** – Պէյթետտին, Ծուֆ:  
**Ժամանակացոյց** – Երեքշաբթի, Կիրակի, ժամը 9:00էն 18:00:

**● ՊԱԱԼՊԷՔԻ ԹԱՆԳԱՐԱՆԸ**

Պաալպէքի թանգարանը իր դռները բացաւ 1998 թուականին՝ յիշատակելով Վիլհայմ Բ. կայսրի Պաալպէք այցելութեան 100րդ տարեդարձը: Պաալպէքի առաջին պեղումները մենք կը պարտինք այդ կայսրին:

Թանգարանին մէջ ներկայացուած են տեղեկութիւններ պրոնզի դարէն եւ յունական ժամանակաշրջաններէն, ինչպէս նաեւ՝ հռոմէական 200 տարուան իշխանութեան շրջանէն, որուն ընթացքին շինուած են տաճարները: Դուր պիտի գտնէք նաեւ քարտէսներ, նկարներ, տեղեկութիւններ, որոնք կը բացատրեն, թէ ինչո՞ւ եւ ի՞նչպէս շինուած են այդ տաճարները:

**Վայր** – Պաալպէք



2002ի ՄՈՆԻՏՈՐ

# ՊՐԱԶԻԼ՝ ԻՆՏԵՐՈՐԻ ԱՆՊԱՏ ԸԼԼԱՆՈՎ ԱԾՌԱՐԻՒ ԱՌՈՅԵԱՆ

Ճափոնի եւ հարաւային Բորեայի մէջ տեղի ունեցած 2002ի Մոնտիալը, ինչպէս տասնվեց նախորդները, անշուք չանցաւ, այլ իր յստակ հետքը ձգեց աշխարհի տարածքին ամէնէն աւելի հոչակաւոր եւ սիրուած այս մարզաշարին պատմութեան վրայ:



վրայ դրուած կարգ մը յոյսերուն, չկրցան գէթ կոլ մը իսկ նշանակել:

Թուրք մարզիկ հաքան Ճիւքիւր հանդիսացաւ Մոնտիալի պատմութեան մէջ ամէնէն արագ կոլ նշանակողը (11րդ երկվայրկեան). երբ, հարաւային քորեայի յետսապահին անտեղի մէկ սխալէն օգտուելով, նշանակեց Մոնտիալի իր միակ կոլը:

## 31 Մայիսէն 30

Յունիս երկարած Մոնտիալը յատկանշական էր այն իմաստով, որ առաջին անգամ ըլլալով անիկա Ասիոյ ցամաքամասին վրայ տեղի ունեցաւ: Յատկանշական էր նաեւ այն իմաստով, որ առիթը տուաւ նոր դէմքեր եւ նոր մրցանիշներ աւելցնելու ֆութպոլի հարուստ պատմութեան մէջ:

Մոնտեալը նաեւ առիթ մը եղաւ հաճելի եւ հետաքրքրական պահեր անցընելու, նկատի ունենալով անոր ընթացքին արձանագրուած մրցանիշները, անակնկալները եւ մանաւանդ Գերմանիա - Պրազիլ պատմական աւարտականը, որ Մոնտիալի պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով տեղի կ'ունենար:

Մոնտիալի կոլերուն մեծամասնութիւնը նշանակեց Պրազիլ (18), որուն աստղը՝ Բոնալտօ, Յ կոլերով հանդիսացաւ Մոնտիալին կոլսքորը, եւ հաւասարեցաւ ազգակից Փէլէի մրցանիշին (12 կոլ Մոնտիալներու ընթացքին):

Ֆրանսա, Չինաստան եւ Ալժիրական Արաբիա եղան ամէնէն անբախտ կազմերը, որովհետեւ, հակառակ իրենց նիւստի, հանդիսացաւ ամէնէն անբախտ կազմերը, որովհետեւ, հակառակ իրենց

Մոնտիալին խոյելի կէտն էր իրաւարարութիւնը, որ պատճառ դարձաւ շատ մը հսկաներու պարտութեան: Իրաւարարները, բաւական քննադատուեցան միջազգային մամուլին կողմէ:

Ընդհանուր առմամբ, այս Մոնտիալը եղաւ բաւական խանդավառ ու անակնկալներով լեցուն եւ, շնորհիւ իտալացի իրաւարար Քոլինայի արդար սուլիչին, ունեցաւ պատմական աւարտական մը:

## ՄՈՆԻՏՈՐԻ ԹԻՒՆԵՐՈՎ

- ՄՈՆԻՏՈՐԻ 64 մրցումներուն ընթացքին արձանագրուեցան 48 յաղթանակներ եւ 16 հաւասարութիւններ, մինչ 2 մրցում վերջ գտաւ փենալթիներով:
- ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒՆ ընթացքին նշանակուեցան 161 կոլեր:
- 64 մրցումներուն ընթացքին, տրուեցան 18 փենալթիներ, որոնց 13ը կոլի վերածուեցաւ:
- 3 մրցում վերջ գտաւ

- ճերմակ հաւասարութեամբ:
- 3 մարզիկներ սխալմամբ իրենց բերդէն ներս կոլեր նշանակեցին:
- ԻՐԱՆԻԱՐՈՆԵՐԸ 259 անգամ գործածեցին իրենց դեղին քարտերը, իսկ 17 անգամ՝ իրենց կարմիր քարտերը:
- ՄՈՆԻՏՈՐԻՆ ամէնէն կոշտ մրցումը եղաւ Բուսիա - Ճափոն, որուն ընթացքին կատարուեցաւ 62 ֆաուլ:
- ՊՐԱԶԻԼԻ խմբապետը՝

- Քաֆու, հանդիսացաւ ամէնէն աւելի ֆաուլ կատարող մարզիկը (19):
- ԱՄԵՆԵՆ շատ ֆաուլ կատարուեցաւ թուրք ելտորայ Պաշթուրքի դէմ (31):
- ՓՈՒ ԱՌՈՅԵԱՆ Գերմանիոյ խմբապետ՝ Օլիվըր Քան, ընտրուեցաւ լաւագոյն բերդապահը եւ արժանացաւ ՖԻՖԱի «Ոսկեգնդակին»:
- Անոր շնորհի Գերմանիա 6 դիրք յառաջացաւ եւ գրաւեց ՖԻՖԱի ընդհանուր դասաւորման 5րդ դիրքը:

## ՌԻՍՊԵԼՏԸՆԻ ԹԵՆԻՍԻ ՄՐՅԱԾԱՐՔԻՆ ԴԱԻԻԹ ՆԱԼՊԱՆՏԵԱՆԻ ԿԱՏԱՐԱԾ ՄԵԾ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ

Թենիսի աշխարհին մէջ տեղի ունեցող կրան շրջէմի չորս մրցաշարքերէն մէկը՝ Ուիմպլըտընի թենիսի բաց մրցաշարքը աւարտեցաւ կիրակի, 7 Յուլիսին, թիւ 1 դասուած աւստրալիացի Լէյթըն հուլիթի յաղթանակով: Աւարտական մրցումին ան 6-1, 6-3 եւ 6-2 արդիւնքով պարտութեան մատնեց արժանթինահայ Դաւիթ Նալպանտեանը (դասուած՝ 28րդ):

հակառակ իր կրած այս պարտութեան, 20 տարեկան Նալպանտեան յաջողեցաւ իր անունը արձանագրել Ուիմպլըտընի թենիսի պատմութեան մէջ, որովհետեւ դարձաւ առաջին արժանթինցի, որ կը յաջողի հասնիլ աւարտական հանգրուան: 2000ին արհեստավարժ թենիսմէն դարձած Դ. Նալպանտեան առաջին անգամ ըլլալով էր, որ կը մասնակցէր Ուիմպլըտընի այս մրցաշարքին:

**ՊՋՏԻԿ - ՄՋՏԻԿ ԳԱՍՊԱՐՈՎՆԵՐ**  
Մեր նախորդ թիւով հրատարակուած «Պլտիկ - մլտիկ գասպարովներ» գրութեան մէջ յիշուած ճատրակի փոքրիկ ախոյեաններու շարքին է նաեւ Մարիա Թոսունեան (11 տարեկան), որ Լիբանանի 14էն վար տարիքային դասակարգի աղջկանց ախոյեանութեան մրցումին գրաւած է 9. դիրքը:

**ՄՈՆԻՏՈՐԻ ՄՐՅԱՆՔԻ ԱՐԴԻՒՆՔՆԵՐ**  
Այս Մոնտիալին արձանագրուեցան բազմաթիւ անակնկալներ: Բետեաբար, «Պլտիկ-Մլտիկ» որոշեց նկատի ունենալ մրցանքին միայն առաջին հարցումը:  
Մոնտիալի մրցանքին շահողն է **Գէորգ Գասապեան**: Ան կրնայ ներկայանալ «Ազգակ»՝ ստանալու համար իր նուէրը, տրամադրուած «**STEVE SPORT**» հաստատութեան կողմէ:

ՓԱԽԱՐՈՒԹՅՈՒՆ... ԱՌԱՆՅ ՁԱՅՆԻ

Օփերայի 66ամեայ հռչակաւոր թենոր Լուչիանօ Փաւարոթթի 33 տարիներու իր երաժշտական ասպարէզէն եւ 375 ելոյթներէն ետք, վերջերս Նիւ եորքի Մեթրոփոլիթըն օփերայէն ջնջեց «Թոսթա»ի իր ելոյթը:



Թէեւ կ'ըսուի, որ Փաւարոթթի իր ճայնը կորսնցնելու վրայ է, սակայն թենորը երբեք պատրաստ չէ վերջակէտ դնելու իր ասպարէզին: Ան «Սի. էն. էն.»ի յայտնած է, թէ ասպարէզէն պիտի հեռանայ իր 70րդ տարեդարձին եւ թէ անկէ ետք բնաւ պիտի չերգէ. նոյնիսկ բաղնիքին մէջ:

Նշենք, որ Փաւարոթթի, Տոմինկօ եւ Քարերաս ճափոնի մէջ ելոյթ ունեցան Մոնտիալի փակման հանդիսութեան ընթացքին:

ՄԱՆԻՃԱԿԱԳՈՅՆ ՃԱՔԱՐՆԵՐ

Ամերիկեան «էմ. էն. էմ.» ընկերութիւնը Օգոստոս ամսուան ընթացքին որոշած է իր պատիկ գունաւոր շաքարներուն շարքին նոր գոյն մը աւելցնել: Գաղափարներու համար ան դիմած է ժողովուրդին: Աւելի քան տասը միլիոն անձեր մասնակցած են արշաւին եւ պարզուած է հետեւեալ պատկերը. 40 առ հարիւր փափաքած է ունենալ մանիշակագոյն շաքար, 21 առ հարիւրը բաց կանաչ գոյնով, իսկ 14 առ հարիւրը՝ վարդագոյն շաքարներ:

Արդ, Օգոստոս ամիսէն սկսեալ «էմ. էն. էմ.» շաքարներուն կարմիր, կանաչ, դեղին, սրճագոյն եւ կապոյտ գոյներուն կը միանայ մանիշակագոյնը:

ՎՏԱՆԳԱԽՈՐ ԱՐԿԱԾԱՆՆԴՐՈՒԹԻՒՆ



Չափահաս, պատանի թէ երեխայ՝ բոլորս ալ կը սիրենք խաղավայր յաճախել, զուարճանալ եւ ապրիլ արկածախնդրական պահեր:

Այդ խաղերուն ամէնէն սարսափազդունները *ռուլըր քոսթըր*ներն են: Ներկայիս կը փորձեն որոշ սահմաններ դնելու *ռուլըր քոսթըր*ներու արագութեան եւ վերիվայրումներուն: 1990 թուականէն ի վեր *ռուլըր քոսթըր* ընողներու պարագային արձանագրուած են ուղեղային 58 տազնապներ, որոնցմէ ութն՝ մահացու:

ՆԱԽ ԴԵԾԱՆԻՒ, ՅԵՏՈՅ ՆԵՏ

Ողիմպիական խաղերու նորագոյն պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով է, որ 2004ի Աթէնքի Ողիմպիական խաղերը, փոխան նետաձգութեան, պիտի սկսին հեճանիւ մրցումներով:

ՈՍՏՐԿԱՆ ԳԵՂԵՅԿՈՒԿԻՆ



Ռուսիոյ գեղեցկուհի Օքսանա Ֆետտորա վերջերս Փորթօ Ռիթոյի մէջ ընտրուեցաւ Տիեպերքի գեղուհի: Ան մարզուած է Ռուսիոյ ոստիկանական ակադեմիային մէջ եւ իր շնորհներուն շարքին կը նշէ, որ քանի մը երկվայրկեանի ընթացքին կրնայ «քլաշինքով» տիպի գնդացիր մը քակել եւ կազմել:


«ԻՈՅԱՄՈՂԷՋ – ԹՌՉՈՒՆՆԵՐՈՒ» ԲՐԱԾՈՆԵՐՈՒ ՅԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ

Բիւսիսարեւմտեան Արժանթինի մէջ հետազօտողներ անճանօթ անասուններու՝ թռչուններու կամ երկտանի փոքրիկ հոյամողէչներու հեռաւոր նախնիներ, աւելի քան 200 միլիոն տարուան բրածոյ բազմաթիւ հետքեր յայտնաբերած են: Ասիկա կը նշանակէ, որ այդ հետքերը առնուապն 55 միլիոն տարի աւելի հին են քան այն բրածոն, որ կը նկատուի բոլոր թռչուններուն նախնին՝ *արքէոփոթրիքսը*, որ 55 միլիոն տարեկան է:


ՕԳՆՈՒԹԻՒՆ, ՎՏԱՆԳԻ ՄԵՋ ԵՆ

Կ'ուպէս սիպերիական վագր կամ ֆիլիփինեան արճիւ տեսնել: Եթէ այո, պէտք է աճապարես, որովհետեւ մինչեւ 2032 թուականը այս կենդանիները, ինչպէս նաեւ աշխարհի ստնաւորներուն քառորդը եւ թռչուններուն մէկ ութերորդը անհետացած պիտի ըլլան: Պատճառ՝ անտառներու եւ վայրի տարածքներու բնաջնջումը:





1. 1 - 46 կետերը իրարու միացուր գիտնալու համար, թե ինչու՞ «Պստիկ - Մստիկ»ը վարմացած է:




2. Կրնա՞ս օգնել «Պստիկ - Մստիկ»ին՝ ելլելու համար այս լափիրինթոսէն:

պ	զ	տ	ի	կ	մ	զ	տ	ի	կ
յ	ա	կ	ո	բ	ա	թ	ո	ռ	ա
ա	ս	մ	ո	լ	կ	ե	լ	ի	պ
ր	ա	ա	ծ	ա	ի	լ	փ	թ	ի
կ	ռ	ր	ո	լ	է	ր	դ	ա	կ
ա	զ	դ	ա	կ	ջ	ա	ր	ե	լ


3. Կրնա՞ս գտնել պահուած բառը՝ տախտակին մէջէն ջնջելով ցանկին բառերը:

պստիկ մստիկ - կապիկ - մակի - էջ - աղանկ - աթոռ - մուկ - մարդ - դիթա - յակոբ - սառ - արեւ - տուփ - եւ

Յակոբ Մելքոնեան, 11 տարեկան  
 Բայ Աւետ. Փ. եւ Է. Թորոսեան վարժարան



4. Կրնա՞ս օգնել «Պստիկ - Մստիկ»ին՝ գտնելու համար ապակիէն պակտող կտորը:



5. Դուռ մը ներկելու համար «Պստիկ - Մստիկ» պէտք ունի ներկի մէկ անօթի, մէկ մեծ փեղկի համար՝ կէս անօթի, երկու պստիկ փեղկերու համար՝ դարձեալ կէս անօթի:

Քանի՞ ներկի անօթի պէտք պիտի ունենայ «Պստիկ - Մստիկ»՝ լման ջէնքը ներկելու համար:

Ժամանցի պատասխանները լոյս պիտի տեսնեն «Ազդակ»ի ճարաթ, 20 Յուլիս 2002ի թիւին մանկապատանեկան էջին մէջ:

**ԱՄՍՈՒԱՆ ԻԱՐՅՈՒՄԸ**

Կրնան մասնակցիլ 6էն 12 տարեկան աշակերտները: Կտրօնը ամբողջացնելէ ետք հասցնել «ԱԶԴԱԿ»ի խմբագրատուն: Յաջորդ թիւով պիտի յայտարարուի մրցանքը շահողին անունը: Ան պիտի ստանայ նուէր մը:

**ԻԱՐՅԱՐԱՆ ԹԻՒ 4**

1.- Որն է արջակատուին գլխաւոր ուտելիքը: -----

2.- Ընդհանուր քանի՞ կոլ նշանակուած է Մոնտիալի ընթացքին:-----

3.- Տուր Լիբանանի մէջ գտնուող 3 թանգարանի անուններ: -----

Անուն - Մականուն -----

Վարժարան -----

Ծննդեան թուական -----

Բեռածայնի թիւ -----

**ԻԱՐՅԱՐԱՆ ԹԻՒ 3Ի ԾԱԹՈՂԸ**

Բարցարան թիւ 3ի շահողը՝ Ճաղիկ Զափարեան (11 տարեկան Ճամբեան - Թաթիկեան վարժարանէն), շահեցաւ անցեալ ամստան մրցանքը: Ան իր նուէրը կրնայ ստանալ «Ազդակ»էն, Ճաղիկեան կեդրոն:



Կ Ա Ր Ծ Ր Ա Տ Ա Մ Ը

Կարծրատամը ճեր, մոխրագոյն գայլ մըն էր: Ան շատ կը նեղուէր, որ պինք չար գայլ կը կոչէին: Կ'ուպէր, որ պինք սիրեն: Ան առանձին կը պգար եւ կ'ուպէր ընկեր մը ունենալ: Ծատ մտածեց եւ որոշում մը տուաւ:

- Ա՛յ չեմ ուզեր չար գայլը ըլլալ: Կ'ուպեմ բարի ըլլալ, որպէսզի պիս սիրեն ու ինձի հետ բարեկամանան,- ըսաւ գայլը:

Բիմա ան շատ ուրախ կը պգար: Յանկարծ անտառին խորը նկատեց ճիշդ կարմիր գիւարկիկին նմանող աղջնակ մը, որ գեղեցիկ ճաղիկներ կը քաղէր: Ծատ կամայ մօտեցաւ եւ ժպտեցաւ: Բայց աղջնակը խոտերուն վրայ գայլին ականջներուն շուքը տեսաւ, շատ վախցաւ եւ ճաղիկները հոն ձգելով՝ վապեց ու պոռայ.- Օգնութիւն, օգնութիւն:

Կարծրատամը նեղուեցաւ ու հեռացաւ: Ծարունակեց քալել ու ճամբան հանդիպեցաւ երկու գառնուկներու, որոնք գետակէն ջուր կը խմէին:

- Խմեցէ՛ք, անուշիկ գառնուկներ, ես ձեզի չեմ վնասեր,- ըսաւ գայլը ժպտելով: - Դուն չե՞ս այն չար գայլը, որ



մեր եղբայրները կերաւ,- մայեցին գառնուկները ու փախուստ տուին:

Գայլը շատ բարկացաւ, բայց քանի որ որոշած էր բարի ըլլալ, շարունակեց քալել: Քիչ անդին տեսաւ ուլիկներ, որոնք իրենց տնակին մօտ կը ցատկոտէին:

«Ինչ լաւ կ'ըլլայ, եթէ ուլիկները ինձի հետ խաղան», մտածեց գայլը:

- Ուլիկներ, անուշիկ ուլիկներ, կ'ուպէք ինձի հետ խաղալ,- ըսաւ ան մօտենալով:

- Անր մայրը մեզի պատուիրեց, որ, միայն ճերմակ տոտիկներ ունեցողներուն հետ խաղանք, ըսին ուլիկները եւ, տուն մտնելով, դուռը գոցեցին:

Խեղճ գայլը շուարած հեռացաւ: Վերադարձաւ իր որջը եւ որոշեց աւելի չար ըլլալ եւ վախցնել ամբողջ անտառի

բնակչութիւնը: Աղուէս մը, որ հոնկէ կ'անցնէր, նկատեց գայլին տխրութիւնը ու պոռայ.

- Բէյ կարծրատա՛մ, ինչո՞ւ տխուր կ'երեւիս:

- Կ'ուպեմ բարի գայլ ըլլալ, բայց ինձմէ կը փախչին, պիս կ'անարգեն: Ես ալ որոշեցի աւելի չար ըլլալ:

- Ինձի հետ եկուր,- ըսաւ աղուէսը,- ես հաւնոց մը գիտեմ, որուն մէկ ճայրը փրթած է: Կռնակիդ վրայ ելլելով ներս կը մտնեմ եւ քեզի ալ քանի մը հաւ կու տամ:

Սակայն կարծրատամը որոշած էր բարի ըլլալ եւ բարկացած հեռացաւ աղուէսէն:

Անտառին ճայրը ագարակի մը մէջ պզտիկ տղայ մը կը խաղար: Ան երբեք չար գայլ տեսած չէր: Մօտեցաւ կարծրատամին եւ սկսաւ վիպը շոյել:

- Անտոր,- կանչեց ան իր կորսուած շան անունով:

Տղեկին մայրը դուրս ելաւ եւ տեսաւ, որ իր տղան ինչ լաւ կը խաղար: Անոնք ուզեցին, որ կարծրատամը իրենց քով մնայ: Կարծրատամը փոխուեցաւ, ապրեցաւ Անտորին տնակին մէջ եւ սիրուեցաւ բոլորէն: Անկէ ետք անտառի ոչ մէկ գազան փորձեց մօտենալ ագարակին:

Չար գայլը դարձաւ բարի Անտոր մը, որովհետեւ պզտիկ տղան իրմէ չէր վախցած եւ առանց կասկածելու՝ սիրած էր պինք:

ՃՈՒՏԱՍԵՆՈՒԿ

Անր պարտէպին ճայրը կայ տասը տանձի ճառ:

Տասը տանձի ճառին ճայրը տասը ճանր տանձ:

Ձեր պարտէպին ճայրն ալ կա՞յ տասը տանձի ճառ:

Տասը տանձի ճառին ճայրը տասը ճանր տանձ: ...

Մկրատով մտրուկի մապը մկրատեմ,

Մտրուկի մապէն մտրակ պատրաստեմ... ...

Ծիտիկը կաթիլ մը ջուր բերաւ ճուտին ճարաւ,

Ծառի ծիւղէն ճուտը տեսաւ ծիկ - ծիկ ըրաւ: ...

Կարմիր կովիկ տուր կաթ, կարագ,

Արտակ ելիր ու կե՛ր արագ: ...

Անր տունը երէկ ցերեկ երեք երէց եկան, երէկ ցերեկ գացին:

Ձեր տունն ալ երէկ ցերեկ երեք երէց եկա՞ն, երէկ ցերեկ գացին: ...

Կար ու չկար գաճած արջ մը կար,

Այդ գաճած արջին աջ աջքը չկար: ...

Երեք անգամ երեք կով, Արօտ բերինք երեքով: ...

Գիր ու գրիչ՝ Աչիկին: Ձիր ու չամիչ՝ վաչիկին: ...

Կարդա՛ այս շուտասելուկները, գոց սորվէ՛, յետոյ առանց շփոթելու հինգ անգամ կրկնէ՛, կրնա՞ս...: Յետոյ ընկերներուդ ալ նոյնը ընել տուր. եւ կրնաք մրցիլ:

ՃԱՐՈՒՆԱԿԵՆՔ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԾԱԽԸ

Անր յաջորդ թիւով մենք պիտի անդրադառնանք կարգ մը ուրիշ թանգարաններու (ճովային, օճառի...): Անշուշտ մեր նշած այս բոլոր թանգարաններուն կողքին կան նաեւ հետաքրքրական ուրիշ վայրեր, որոնք այս թիւին մէջ չեն յիշուած: Օրինակի համար, վստահաբար ճանօթ էք նշանաւոր Աուսայի բերդին: Այս մեր ցանկը ամբողջացնելու համար կրնաք դո՛ւք ալ գրել ձեր այցելած տարբեր թանգարաններուն կամ հետաքրքրական վայրերուն մասին եւ կանոնք դրկել «Պզտիկ - Մպտիկ»ին:



## ՄՕՐԱ ԽՆԴՐԱՆՔԸ

Գարնանային պայծառ առաւօտ մը  
Մայրս կանչեց զիս քովը.  
Եւ նստեցուց Ձիս քովը:

Երբ խնդրանքը պիտի ըսէր,  
Ձիս լացուց իր արցունքովը,  
Եւ ըսաւ գաղտնի խնդրանքը,  
Որ շատ դժուար էր:

Ես լալով դուրս ելայ

Եւ աչքերս սրբեցի  
Ճատ տխուր ձեւով,  
Որ յուզիչ էր:

Երբ մայրս տեսաւ,  
Ինքն ալ յուզուեցաւ  
Եւ խեղճ ձայնով մը ըսաւ.  
«Որդեա՛կս, մի՛ լար»:


ԱՌԵՏԻՔ ՄԵԼՔՈՆ  
(ԱՐԷՆ ՍԱՐԳԻՍԵԱՆ, 10  
տարեկան) ԹՈՉՆՈՅ ԲՈՅՆ

## Գիտէ՞ր, թե...


- Ամէնէն մեծ կենդանին կապոյտ կէտն է, որուն երկարութիւնը 30 մետր է, իսկ ծանրութիւնը՝ 160 թոն:
- Ամէնէն երկար ապրող կենդանին վայրի կրիան է, որ կրնայ մինչեւ 177 տարի ապրի:
- Ամէնէն խելացի կենդանին դէփինն է:

ԱԼԻՆ ՆՈՒՐԱ


Մ. եւ Բ. Արսլանեան Ճեմարան, Ե. դասարան



Ալիք Գանտահարեան (6 տարեկան)



Գէորգ Մարդեան, 10 տարեկան, Արսոր Գասարճեան վարժարան:



Ասպետ Բարմանտայեան, Ե.1 դասարան, Մ. եւ Բ. Արսլանեան Ճեմարան

«Պլտիկ – Մպտիկ»-ին գրեցին.  
Թալար Սարգիսեան, Սարին Բաննէշեան,  
Սեպուհ Բէօւէան եւ ԲԱԲԼԻ տնօրէնութիւն:

Ձեր գրութիւնները կամ նամակները կրնաք ուղարկել՝  
bezdlq\_mezdlq@hotmail.com  
կամ յանձնել՝ «ՊՁՏԻԿ-ՄՁՏԻԿ»-ի  
խմբագրութեան, «ԱԶՊԱԿ»  
«Յաղպոյեան» կեդրոն

**"Fun Educational?"**  
Come and explore Rainbow Island where fun and education go hand in hand. Your children will learn through play in an environment that fosters creativity and genius.

The safe and secure surroundings, professional staff, and varied activities will contribute to your children's wellbeing and growth. You can spend quality time with your children and watch them bloom before your very eyes. Rainbow Island, the fun and learning center, charges a daily fee that is within all budgets and opens up a whole new world of Edutainment - 2 play areas for different age groups, art workshops, science workshops, computer center, library, shadow wall room, multipurpose theaters, specialized area for babies.

Rainbow Island offers you the chance to have a quiet yet interesting family outing and proposes a number of healthful and enjoyable meals. Rainbow Island welcomes children aged 14 years and under.

**Enquire about our fantastic Summer Day Camp**  
Rainbow Island, a place dedicated to dedicated parents, is the place for you and your children

**RAINBOW ISLAND**  
FAMILY ENTERTAINMENT CENTER

Frabourg St. Jean, Intercession Demissous road, and Presidential Palace highway, Hazmich, Lebanon  
Tel: 05-956444/5 - 957444  
Fax: 05-956446  
e-mail: iac@terra.net.lb  
www.rainbowislandjunior.com